23400

ՍՍՌՄ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏ

ՍՍՌՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

331.2
Ա-11

# ՀՐԱՀԱՆԳ

## ՊԵՏԱՊԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԵԼԻՔ ՊՐԵՄԻԱԼ-ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

3 Հոկտեմբերի 1940 թ.

№ 728/119

331.2
Ա-11

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԳԻ

ԵՐԵՎԱՆ 1940

18.02.2014

Թարգմանեց՝ Լ. ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
Խմբագրեց՝ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ
Սրբագրեց՝ Գ. Ջրաղացպանյան

ВФ 1204

БИЗ ЦУНХУ 09 Ереван, тип. № 3 БИЗ ЦУНХУ

15 JAN 2010

ՍՍՌՄ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏ

ՍՍՌՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

## ՊԵՏԱՊԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԵԼԻՔ ՊՐԵՄԻԱԼ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

§ 1. Համաձայն ՍՍՌՄ Միության ժողկոմսովետի 1936 թ. 5 սեպտեմբերի № 1626 որոշման «Պետապի կամավոր ապահովագրությունների աշխատանքների մասին» Պետապի շրջանային (քաղաքային) տեսչությունների աշխատակիցներին, կամավոր ապահովագրության ավճարների մուտքի պլանների կատարման և գերակատարման համար, վճարվում է պրեմիալ-խրախուսական վարձատրություն։

§ 2. Եռամսյակային պլանների կատարման և գերակատարման համար պրեմիալ-խրախուսական վարձատրությունը վճարվում է եռամսյակը մեկ անգամ՝

ա) կոլխոզներում կնքած գերկոպարային ապահովագրության համար

բ) քաղաքացիների տնտեսություններում կնքած գերկոպարային ապահովագրության համար

գ) տնային գույքի և փոխադրական միջոցների ապահովագրության համար

դ) կյանքի ապահովագրության համար (կոլեկտիվ և անհատական)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Եռամսակային պլանը ստանալուց 5 օրվա ընթացքում շրջ. (քաղ.) ֆինբաժնի վարիչի կողմից ըստ ենթաշրջանանների հաստատելուց հետո, ապահովագրական ավագ տեսուչը պարտավոր է ներկայացնել վերադաս վարչությանը։

§ 3. Ենթաշրջանային ապահովագրական տեսուչների պրեմիալ-խրախուսական վարձատրությունը հաշվարկվում է տոկոսներով ամսական հիմնական աշխատավարձից, առանց երկարամյա ծառայության, հեռավորության և այլ հավելումների, հետևյալ չափերով՝

| Ենթաշրջանի համայնակային պլանն ամբողջությամբ կատարելու դեպքում | Պրեմիալ-խրախուսական վարձատրության չափը %%-ով ամսական հիմնական աշխատավարձից ելնելով | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 50000 ռուբլուց բարձր համայնակային ընդհանուր պլան ունեցող ենթաշրջանների համար | 40000 ից մինչև 50000 ռուբլի համայնակային ընդհանուր պլան ունեցող ենթաշրջանների համար | 30000 ից մինչև 40000 ռուբլի համայնակային ընդհանուր պլան ունեցող ենթաշրջանների համար | 20000-ից մինչև 30000 ռուբլի համայնակային ընդհանուր պլան ունեցող ենթաշրջանների համար | 10000-ից մինչև 20000 ռուբլի համայնակային ընդհանուր պլան ունեցող ենթաշրջանների համար | 10000 ռ. և պակաս համայնակային ընդհանուր պլան ունեցող ենթաշրջանի համար |
| 100%-ից մինչև 105% | 100 | 90 | 80 | 70 | 60 | 50 |
| 105%-ից բարձր մինչև 110% | 110 | 100 | 90 | 80 | 70 | 55 |
| 110%-ից բարձր մինչև 115% | 1.5 | 110 | 100 | 90 | 80 | 60 |
| 115%-ից բարձր մինչև 120% | 140 | 125 | 110 | 100 | 90 | 70 |
| 120%-ից բարձր մինչև 125% | 160 | 140 | 125 | 110 | 100 | 80 |
| 125%-ից բարձր մինչև 130% | 180 | 160 | 140 | 125 | 110 | 100 |
| 130%-ից բարձր | 200 | 180 | 160 | 140 | 125 | 110 |

§ 4. § 3-ում ցույց տրված աղյուսակով հաշվարկված պրեմիալ—խրախուսական վարձատրությունը ավելացվում է՝

ա) պլանի մի տեսակի գերակատարման դեպքում 25%-ով

բ) պլանի երկու տեսակի գերակատարման դեպքում 50%-ով

§ 5. Ենթաշրջանային ապահովագրական տեսուչը, որը չի կատարի ենթաշրջանի համար սահմանված պլանի ընդհանուր գումարը, կամ կկատարի պլանը ապահովագրության միայն մի տեսակի հաշվին, չի ստանա պրեմիալ-խրախուսական վարձատրություն, թեկուզ ամբողջ շրջանի պլանը կատարված լինի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Քաղաքներում ենթաշրջանային տեսուչները, որոնք ստանում են պլանային առաջադրանքներ երկու տեսակի ապահովագրությունների համար և որոնք պլանը կատարում են որևէ մեկի հաշվին, § 3-ում ցույց տրված աղյուսակով հաշվարկված պրեմիալ-խրախուսական վարձատրությունը պակասեցվում է 40%-ով:

§ 6. Ենթաշրջանային ապահովագրական տեսուչը, որը ժամանակավորապես սպասարկում է բացի իրեն ամրացված ենթաշրջանից, ևս մեկ ենթաշրջան, մյուս ենթաշրջանին 1-ից 2 ամիս սպասարկելու համար ստանում է 25%, իսկ 2 ից 3 ամիս ժամանակով սպասարկելու համար 50%՝ այդ ենթաշրջանին հասանելիք պրեմիալ-խրախուսական վարձատրությունից:

§ 7. Ապահովագրական ավագ տեսչին, բացի ընդհանուր շրջանի պլանի կատարման համար տրվելիք վարձատրությունից, տրվում է պրեմիալ-խրախուսական վարձատրություն, եթե նա ինքնուրույն ենթաշրջան է սպասարկում, ենթաշրջանային տեսուչներին տրվելիք վարձատրության հիմունքներով, ընդունելով տվյալ շրջանի ենթաշրջանային տեսուչների ամսական ամենաբարձր աշխատավարձից:

Այն շրջաններում, որտեղ ապտեսչության հաստիքը բաղկացած է ավ. տեսչից և ավ. հաշվապահից, ապահովագրական ավ. տեսուչը պրեմիալ-խրախուսական վարձատրությունը ստանում է սույն հրահանգի §§ 3, 4 և 5-ի համապատասխան, ընդունելով իր համար հաստատված աշխատավարձից:

Այդպիսի տեսչություններում շրջանի պլանի կատարման համար ապահովագրական ավ. տեսուչը լրացուցիչ վարձատրություն չի ստանում:

§ 8. § 2-ում թվարկած կամավոր ապահովագրությունների շրջանի համար հաստատած համայնակային ընդհանուր պլանը կատարելու և գերակատարելու համար ապահովագրական ավագ տեսուչը ստանում է պրեմիալ-խրախուսական վարձատրություն հետևյալ չափերով՝

| | Շրջաններում, որտեղ ապահովագրական ավ. տեսուչները ինքնուրույն ենթաշրջան չեն սպասարկում | | Շրջաններում, որտեղ ապահովագրական ավ. տեսուչները ինքնուրույն ենթաշրջան են սպասարկում | |
|---|---|---|---|---|
| Շրջանում 3 և պակաս ենթաշրջանների առկայության դեպքում | 50% | Ենթաշրջանային տեսուչներին վճարվող վարձատրության գումարից | 20% | Ենթաշրջանային տեսուչներին վճարվող վարձատրության գումարից, առանց ապահովագրական ավ. տեսչի կողմից սպասարկվող ենթաշրջանի համար հասանելիք գումարի |
| Շրջանում 3-ից ավել ենթաշրջանների առկայության դեպքում | 40% | | 15% | |

§ 9. Շրջանի համար հաստատված կվարտալային պլանի § 2-ում նշված կամավոր ապահովագրություններից որևէ մեկի թերակատարելու դեպքում, § 8-ի համապատասխանորեն ավ. տեսչին հաշվարկած պրեմիալ-խրախուսական վարձատրությունը պակասեցվում է 15%-ով, երկու տեսակի ապահովագրությունների թերակատարելու դեպքում պակասեցվում է 30%-ով, իսկ 3 տեսակի ապահովագրությունների թերակատարելու դեպքում պակասեցվում է 50%-ով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ապահովագրական ավ. տեսուչներին, որոնք քաղաքներում ստանում են պլանային առաջադրանքներ երկու տեսակի ապահովագրության համար և շրջանի ընդհանուր պլանը կատարում են նրանցից մեկի հաշվին, § 8-ի համապատասխանորեն հաշվարկած պրեմիալ-խրախուսական վարձատրությունը պակասեցվում է 25%-ով։

§ 10. Ապահովագրական ավ. տեսուչը, որը չի կատարում շրջանի համար սահմանված պլանի ընդհանուր գումարը, պրեմիալ-խրախուսական վարձատրություն չի ստանում։

§ 11. Ապահովագրական ավ. տեսուչը, որը ժամանակավորապես (մեկ ամսից ավելի) սպասարկում է բացակայող ենթաշրջանային տեսչին, ստանում է այդ ենթաշրջանին հասանելիք պրեմիալ-խրախուսական վարձատրության 10%-ը։

§ 12. Շրջանի ընդհանուր պլանը կատարող ապտեսչությունների ավ. հաշվապահները ստանում են պրեմիալ-խրախուսական վարձատրություն, բոլոր ենթաշրջանային տեսուչներին հասանելիք պրեմիալ-խրախուսական վարձատրության ընդհանուր գումարից, ներառյալ նաև ինքնուրույն ենթաշրջան ունեցող ավ. տեսչի ենթաշրջանին տրվելիք պրեմիալ-խրախուսական վարձատրության գումարը, 20%-ի չափով (երկու հաշվապահ լինելու դեպքում ավ. հաշվապահը ստանում է 12%, իսկ երկրորդ հաշվապահը 8%)։

Այն շրջաններում, որտեղ ապահովագրական տեսչության հաստիքը բաղկացած է ապահովագրական ավ. տեսչից և ավ. հաշվապահից ավ. հաշվապահը պրեմիալ-խրախուսական վարձատրություն ստանում է ավ. տեսչին վճարվելիք պրեմիալ-խրախուսական վարձատրության 30%-ի չափով։

§ 13. Յուրաքանչյուր ենթաշրջանային տեսչին հասանելիք պրեմիալ-խրախուսական վարձատրության հաշվարկի համար ձև № 21 գրքում տարվում է լրացուցիչ հատուկ հաշվառում ըստ առանձին ապահովագրական ենթաշրջանների, Պետապի տեսչությունների հաշվապահական հաշվառման հրահանգում ցույց արված կարգով։

§ 14. Եռամսյակի վերջին ապահովագրական տեսչության հաշվապահությունը պարտավոր է կազմել պրեմիալ-խրախուսական վարձատրության ձև № 33 հաշվարկ-տեղեկագիրը։

§ 15. Ձև № 33 հաշվարկ—տեղեկագիրը կազմվում է ձև № 21 գրքի ենթաշրջանների եռամսյակային հաշիվների նախօրոք ստուգված գումարների հիման վրա։

§ 16. Ձև № 33 հաշվարկ տեղեկագիրը կազմվում է 2 օրինակից, որից մեկը շրջ. (քաղ.) ֆինբաժնի և ապահովագրական ավ. տեսչի եզրակացությամբ այն մասին, որ պրեմիալ-խրախուսական վարձատրությունից աշխատակցին զրկելու ոչ մի հիմք չկա, ներկայացվում է Պետապի վերադաս վարչությանը։

§ 17. Պետապի վարչությունը ստանալով հաշվարկ—տեղեկագիրը, պարտավոր է 15 օրվա ժամկետում ստուգել և հաստատել այն, որից հետո ապահովագրական տեսչությանն ուղարկել նամակ՝ վարչության պետի և գլխավոր հաշվապահի ստորագրությամբ, նամակում ցույց տալով յուրաքանչյուր ապահովագրական տեսչին և հաշվապահին հասանելիք պրեմիալ-խրախուսական վարձատրության գումարը։

§ 18. Պետապի վարչության կողմից հաստատած պրեմիալ

խրախուսական վարձատրության գումարի համար տեսչության հաշվապահությունը կազմում է, հիմնական աշխատավարձի վճարման համար սահմանված ձևով՝ վճարման տեղեկագիր։

Պրեմիալ-խրախուսական վարձատրության գումարից՝

ա) պահվում է եկամտահարկ և կուլտուրնակ տուրք, միաժամանակ պահելով այն հերթական հիմնական աշխատավարձը վճարելիս։ Եկամտահարկը և կուլտուրնակ տուրքը հաշվարկելիս պրեմիալ-խրախուսական վարձատրության գումարը ավելացվում է այն ամսվա հիմնական աշխատավարձի վրա, որ ամսին փաստորեն վճարվում է պրեմիալ-խրախուսական վարձատրությունը։

բ) մասհանվում է սահմանված տոկոսներով սոցապմուծումները։

Արձակուրդային կամ չօգտագործած արձակուրդի դիմաց փոխհատուցում վճարելիս, միջին աշխատավարձը հաշվելու համար նկատի է առնվում նաև վճարած պրեմիալ-խրախուսական վարձատրությունը։ Արձակուրդի դիմաց վճարած համապատասխան մասը ձևակերպվում է պրեմիալ-խրախուսական վարձատրության համար բաց թողնված վարկերի հաշվին։

§ 19. Պետապի միութենական, ավտոնոմ ռեսպուբլիկաների, երկրների և մարզերի վարչություններին իրավունք է վերապահվում պակասեցնելու ապահովագրական ավագ և ներշրջանային տեսուչներին տրվելիք պրեմիալ-խրախուսական վարձատրությունը, նրանց աշխատանքներում թերություններ լինելու դեպքում (օժկոմների և ապգործակալների ստուգման պլանը թերակատարելու, կամավոր ապահովագրությունների ձևակերպումներում տեխնիկական սխալների, ապահովագրվողների անբավարար սպասարկման համար հիմնավորված բողոքների դեպքում և այլն)։

Այն ապահովագրական տեսուչները, որոնք չեն ապահովում մշտական հսկողությունը ապգործակալների, հավաքարարների և այլ հաշվետու անձանց աշխատանքներում, որի հետևանքով առաջացել է ապահովագրական վճարների հափշտակումներ, վատնումներ ու խեղաթյուրումներ ապահովագրական աշխատանքներում, լիովին զրկվում են պրեմիալ-խրախուսական վարձատրությունից։

Ապահովագրական տեսչությունների հաշվապահները զրկվում են պրեմիալ-խրախուսական վարձատրությունից այն



դեպքում, եթե կհաստատվի հաշվառման և հաշվապահության անբավարար վիճակը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անբավարար դրվածքի հետևանքով հափշտակումների և վատնումների առկայության դեպքում։

§ 20. Պետապի հանրապետական կամ երկրային (մարզային) վարչության պետի կողմից որոշումը, պրեմիալ-խրախուսական վարձատրության պակասեցման կամ մերժման մասին, կատարվում է կամավոր ապահովագրությունների աշխատանքների ստուգման և հաշվառման ու հաշվետվության նյութերի հիման վրա։ Որոշումը պետք է ձևակերպվի Պետապի վարչության հրամանով և ուղարկվի ռեսպուբլիկայի, երկրի, մարզի բոլոր ապահովագրական տեսչություններին։

§ 21. Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում 1940 թ. 4-րդ եռամսյակից։ ՍՍՌՄ ՖԺԿ 1938 թ. 9/10 — № 497/184 հրահանգը «Պետապի շրջանային և քաղաքային տեսչությունների աշխատակիցների կամավոր ապահովագրության պլանների կատարման և գերակատարման համար տրվելիք պրեմիալ-խրախուսական վարձատրության մասին» վերացվում է։

**ՍՍՌՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարի Տեղակալ՝ ՄԱԼԵՑԻՆ**

**ՍՍՌՄ Պետապի գլխավոր վարչության պետի տեղակալ՝ ՄԵՏԵԼԿԻՆ**

Պետական Հայկական վարչություն
Ք. Երևան

# ՀԱՇՎԱՐԿ–ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Պրեմիալ-խրախուսական վարձատրության

Ձև № 33

Կցում ՍՍՌՄ ԺԺԿ 1940 թ.
№ 728/119 հրահանգի

194 թ. ——— կվարտալի ——— շրջ. (քաղ.) ապահովության

| Ապահովագրական ենթաշրջանային տեսուչների ազգանունները | Ամսական նախնական աշխատավարձը | Կամավոր ապահովագրությունների տեսակները | Ըստ պլանի ապահովագրական գումարը (ռուբ.) | Կվարտալում մուտք են եղել ապահովագրական վճարներ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ռուբլի | % % պլանի նկատմամբ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | Գերկոպերատիվ կոլխոզ . | | | |
| | | » աշխ. տնտեսութ. | | | |
| | | Տնային գույքի ապահ. . . | | | |
| | | Կյանքի ապահովագրութ. | | | |
| | | Ընդամենը . . | | | |
| | | Գերկոպերատիվ կոլխոզ . | | | |
| | | » աշխ. տնտեսութ. | | | |
| | | Տնային գույքի ապահ. . . | | | |
| | | Կյանքի ապահովագրութ. | | | |
| | | Ընդամենը . | | | |
| | | Գերկոպերատիվ կոլխոզ . | | | |
| | | » աշխ. տնտեսութ. | | | |
| | | Տնային գույքի ապահ. | | | |
| | | Կյանքի ապահովագրութ. | | | |
| | | Ընդամենը . . | | | |
| Ամբողջ շրջանում | | Գերկոպերատիվ կոլխոզ . | | | |
| | | » աշխ. տնտեսութ. | | | |
| | | Տնային գույքի ապահ. . . | | | |
| | | Կյանքի ապահովագրութ. | | | |
| | | Ընդամենը . . | | | |

| Հասնում է պրեմիալ-խրախուսական վարձատրություն Ըստ հաշվարկի | Ենթակա է վճարման |
|---|---|
| 7 | 8 |
| ——— % ամսական հիմնական աշխատավարձին կամ ——— ռուբ. ——— կոպ., իսկ դուրս եկած այդ գումարից ——— % ——— տեսակ կամավոր ապահովագրության պլանի թերակատարման համար ——— | ——— ռուբ. ——— կոպ. |
| ——— % ամսական հիմնական աշխատավարձին կամ ——— ռուբ. ——— կոպ., իսկ դուրս եկած այդ գումարից ——— % ——— տեսակ կամավոր ապահովագրության պլանի թերակատարման համար ——— | ——— ռուբ. ——— կոպ. |
| ——— % ամսական հիմնական աշխատավարձին կամ ——— ռուբ. ——— կոպ., իսկ դուրս եկած այդ գումարից ——— % ——— տեսակ կամավոր ապահովագրության պլանի թերակատարման համար ——— | ——— ռուբ. ——— կոպ. |
| Ընդամենը բոլոր ենթաշրջանային ապահովագրական տեսուչներին ——— | ——— ռուբ. ——— կոպ. |
| ա) Ապահովագրական ավագ տեսչին ——— (ազգանուն, անուն) ——— % ենթաշրջ. տեսուչներին հասնող գումարից (բացի այն գումարից, որը հասնում է ավ. տեսչին ինքնուրույն ենթաշրջան սպասարկելու համար) կամ ——— ռուբ. ——— կոպ., իսկ դուրս եկած այդ գումարից ——— % շրջանի պլանը ——— տեսակ կամավոր ապահովագրության թերակատարելու համար ——— | ——— ռուբ. ——— կոպ. |
| բ) Ավագ հաշվապահին ——— (ազգանուն, անուն) ——— % ենթաշրջանային տեսուչներին հասնող գումարից (ներառյալ նաև ավ. տեսչի ենթաշրջանը) ——— | ——— ռուբ ——— կոպ. |
| Հաշվապահին ——— (ազգանուն, անուն) ——— % ենթաշրջանային տեսուչներին հասնող գ. մ. ——— | |

Ընդամենը ըստ տեսչության ———

——— 194 ——— թ. ———

Ապահովագրական ավագ տեսուչ՝ (ՍՏՈՐԱԳՐՈՒ...)
Ավագ հաշվապահ՝ (ՍՏՈՐԱԳՐՈՒ...)

| Շրջֆինբաժնի վարիչի և ապահովագրական ավագ տեսչի եզրակացությունը (տես հրահանգի § 16) | Վարչության կամավոր ապահովագրության բաժնի եզրակացությունը |
|---|---|
| Շրջ. (քաղ.) Ֆ բաժվար՝ (ՍՏՈՐԱԳ.)<br>Ապ. հով. ավագ. տեսուչ՝ (ՍՏՈՐԱԳ.) | Կամ. պբաժվար՝ (ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ) |

Պետական վարչության հաշվապահության նամբ

Հաշվարկ-տեղեկագիրը ստուգեցի ——— 194 թ. ըստ շրջանի պրեմիալ-խրախուսական վարձատրություն, հաստատված է վարչության պետի կողմից գումարով ——— ռուբլի ——— կոպեկ

Ապահովագրական տեսչությանն ուղարկված է նամակ ———

——— 194 թ. № ———

Գլխ. Հաշվապահ՝ (ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Գոս. Պուբլ. Բիբլիոտեկա ՀՍՍՌ-ССРА ... Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0202798

38